



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՒՈՒ ՄԱՐԶ
ՔԱՐԱԶՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

N 216 16 դեկտեմբերի 2021թ.

ՀՀ Լոռու մարզպետ պարոն
Ա. Խաչատրյանին

Կից ներկայացնում եմ Քարաձոր համայնքի ղեկավարի թիվ 30-Ա և
թիվ 31-Ա որոշումները:
Առդիր 3 էջ:

Համայնքի ղեկավար

Հ. Ռոստոմյան



Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ ՈՒ Թ Յ ՈՒ Ն
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ

ՔԱՐԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզ

գ.Քարաձոր փողոց 1 շենք13

13 դեկտեմբերի 2021թ.

ՈՐՈՇՈՒՄ թիվ 30-Ա

«13» դեկտեմբերի 2021թ.

ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ
ՓՈՓՈԽԵԼՈՒ, ՄԻԱԿՈՐԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ, ՔԱՐԱԶՈՐ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 09.12.2021թ. «ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ
ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ, ՄԻԱԿՈՐԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ
ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» թիվ 28 ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ

ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածով, «Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի» 43-րդ հոդվածով, «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 29.12.2011թ. թիվ 1918-Ն որոշմամբ սահմանված կարգով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 731-Ն, 912-Ն որոշումներով, հաշվի առնելով Քարաձոր համայնքի ավագանու 09.09.2021թ. N 21 որոշումը՝ հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին, միջգերատեսչական հանձնաժողովի 24.08.2021թ. թիվ 183 դրական եզրակացությունը, ՀՀ Լոռու մարզպետի 27.11.2021թ. թիվ 01/111.3/09364-2021թ. գրությունը՝ հողամասի գործառնական նշանակությունը փոխելու վերաբերյալ, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության կառավարության 29.04.2021թ. թիվ 698-Ն որոշմամբ սահմանված կարգը, Հայաստանի Հանրապետության կառավարության 14.03.1997թ. թիվ 51 որոշումը, Հայաստանի Հանրապետության կառավարության 02.02.2002թ. թիվ 88 որոշումը և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասով.


ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Փոփոխել 06-109-0016-0009 կադաստրային ծածկագրից առանձնացված 0.01275 հա էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերի նպատակային նշանակության կապի հողերի գործառնական նշանակության հողամասի նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի հասարակական կառուցապատման:
2. 06-109-0016-0009 կադաստրային ծածկագրից առանձնացված 0.147057 հա բնակավայրերի բնակելի կառուցապատման գործառնական նշանակությունը փոխադրել բնակավայրերի հասարակական կառուցապատման հողերի գործառնական նշանակության:
3. Միավորել նպատակային նշանակությունը փոփոխված 0.01275 հա և գործառնական նշանակությունը փոփոխված 0.147057 հա հասարակական կառուցապատման հողերը և հաստատել հողամասի և դրա վրա գտնվող շենք շինության սահմանները համաձայն սույն որոշման հավելվածը հանդիսացող հատակագծի:
4. Մխալի ուղղման նպատակով միավորված հողամասի վրա առկա շինության գործառնական նշանակությունը փոփոխել մշակույթի տուն:
5. Ճանաչել 180.06 ք.մ. մակերեսով մշակույթի տան, շին. բնութագրում նշված 5.42 ք.մ մակերեսով թիվ 2 շինության, 2021թ. անհայտ անձի կողմից մշակույթի տանը կից կառուցված 22.09 ք.մ մակերեսով աստիճանահարթակի նկատմամբ Քարածոր համայնքի սեփականության իրավունքը:
6. Միավորված 0.159815 հա հողամասի և դրա վրա գտնվող մշակույթի տանը տրամադրել Քարածոր համայնք, 1-ին փողոց, 9 շենք փոստային հասցեն:
7. Սույն որոշումից ծագող իրավունքները և պարտականությունները ենթակա են պետական գրանցման ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից:
8. Ուժը կորցրած Ճանաչել Քարածոր համայնքի ղեկավարի 09.12.2021թ. «Հողամասերի նպատակային նշանակությունը փոփոխելու, միավորելու և փոստային հասցե տրամադրելու մասին» թիվ 28 որոշումը:
9. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Քարածոր համայնքի ղեկավար՝



Հ. Ռոստոմյան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՐԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Քարաձոր համայնք, հասցե՝ ին փողոց 13շենք
Հեռախոս 098-56-16-00

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«16» դեկտեմբերի 2021 թվականի N 31-Ա

ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՔԱՐԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՈՒՆՆԵՐԻ ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 102-րդ հոդվածի 3.2 մասով և հաշվի առնելով, որ Լոռու մարզի Սպիտակ միավորված համայնքում 2021 թվականի դեկտեմբերի 5-ին անցկացվել են համայնքի ավագանու ընտրություններ և ընտրությունների արդյունքները պաշտոնական հրապարակվել են 12.12.2021թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ

- 2021 թվականի դեկտեմբերի 17-ից Քարաձոր համայնքի ղեկավարի լիազորությունները համարել դադարած և նրան ազատել համայնքի ղեկավարի պաշտոնից
- Աշխատակազմի առաջատար մասնագետ-հաշվապահ Հայաստան Սահակյանին ին՝ հաշվարկել և Հրանուշ Ռոստոմյանին վճարել վերջնահաշվարկ:

Համայնքի ղեկավար՝

Հ. ՌՈՍՏՈՄՅԱՆ